

Տարեկան գինը 10 րուբլ, 45 տարվանը 6 րուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

(Օտարազգայնացիք գիտնում են ուղղակի
Тифлис. Редакция „Ммас“)

ՄԱՍԿ

Խմբագրատունը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն լի գումով:

Հայտարարութիւնների համար վճարում են
խաբանչիւր բառին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ

Երկու սկզբունքներ — Ներքին և արտա-
քին. Նախկին Ներքինը լուրերը — Ար-
տաքին և արտաքինը: Հայկական խնդիր և
Թիֆլիս: Մի քանի նկատողութիւններ — Յայտա-
րարութիւններ: Բանասիրական: Կրօն և ազ-
գութիւն:

ԵՐԿՈՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

Ամեն թշնամուն, ամեն հակա-
ռակ կուսակցութեանը, չը նայելով
որ ատելով ատում է ք նրան, կա-
րելի է յարգել, եթէ նա յաջոր-
դաբար է վարվում իր սկզբունք-
ների մէջ, ինքն իրան չէ հակա-
սում, ինքն իրան յարգում է:

Կրօնական ասված վեճի մէջ
մեր հակառակորդները, որոնք ջա-
նում են ժողովրդի առջև ձևանալ
ազգի բոլոր առանձնայատկութիւն-
ների պաշտպաններ և պաշտպանող-
ներ, եթէ ճշմարիտ իրանց բոլոր
ատածների, իրանց պաշտպանած
սկզբունքների մէջ յաջորդաբար
վարվելին, կօնսէկվեն տ լի-
նէին, ինչքան էլ մարդը նրանց
դիմողները ու հակառակէր, այ-

նու ամենայնիւ ստիպված կը լի-
նէր յարգել նրանց:

Բայց երբ որ մի ախոյեան, իր
միտքը ապացուցանելու համար,
իր հակառակորդին փնտելու հա-
մար, դիմում է ստույգեան, բամ-
բասներին, սուտ լուրերին, ճշմար-
տութեան յեղաշրջելուն, երբ իր
հակառակորդին յաղթել ուզե-
նալու համար, պատրաստ է ամեն
միջոցներով հերքել ոչ թէ միայն
իր հակառակորդի ասածները և
անպատճառ նրա բոլոր ա-
սածներին հակառակ ասել,
բայց և իրան թող է տալիս իր
թշնամուն իբր թէ յաղթելու
համար, ուրանալ իր առաջ պաշ-
տած սեփական պրինցիպները
գլխաւորները, — այն ժամանակ այլ
ևս ոչինչ յարգանք չէ կարելի
զգալ դէպի այդ տեսակ ախո-
յեանը:

Այն ժամանակ մարդը կատա-
ղի ատելութեան տեղ ա-
կամայ սկսում է զգալ ամենախոր
արհամարհանքը դէպի իր
հակառակորդը:

Այսպէս և պատահել է մեզ
հետ մեր հակառակորդների վե-
րաբերութեամբ:

Մի ժամանակ մեր հակառա-
կորդները հայոց ազգի օրգանա-
կան գոյութեան սկզբունքները
համարում էին կրօն, հայրենիք
ցեղ և լեզու, ի հարկէ կրօնին ա-
ռաջին տեղը տալով այդ ազգային
գործիչների շարքում:

Մենք պատմական կերպով ա-
պացուցինք «Տարրական մտքեր»
վերնագրով յօդուածների մէջ,
բերելով օրինակներ ոչ թէ միայն
հայոց, բայց և այլ ազգերի պատ-
մութիւնից, որ ազգութիւնը շատ
անգամ շարունակում էր գոյու-
թիւն ունենալ, մինչև անգամ վե-
րանորոգվում էր որպէս ազգու-
թիւն, չը նայելով որ կրօնը մի
կամ շատ անգամ փոխած լինէր,
բայց միշտ կորչում էր որպէս
ազգութիւն, երբ կորցնում էր
հայրենիքն ու մայրենի լեզուն, չը
նայելով որ կրօնը պահպանած էլ
լինէր:

Ինչ պէտք էր պատասխանել

այդ ակներև ճշմարտութեանը:
Հայհոյանքները շատ համոզե-
ցուցիչ չեն... Եւ ահա պէտք է

յեղաշրջել ճշմարտութիւնը, պէտք
է ասել, որ մենք բարոյում ենք
կրօնափոխութիւն, թէև այդ բա-
նը մեր մտքումն էլ չը կար:

Բայց այդ էլ բաւական չէ:
Երբ նոյն հակառակորդները
շուտով հասկացան, որ այդ նեն-
գաւոր միջոցով չեն կարող մոլո-
րեցնել ամբողջ, որ արդէն մոտա-
ւորապէս բաւական արթնացած
է և որ այնքան միամիտ չէ, որ
նրան կարելի լինէր մոլորեցնել
այդ տեսակ մանկական խաղով...

Եւ ահա այդ հակառակորդնե-
րը նոր ընթացք են բռնում: Եւ
ընթացք սկսում են սյրել ինչ որ
պաշտում էին, ոչնչացնել ինչ որ
տարիների ընթացքում անմատ-
չելի, սուրբ էին համարում, ազգու-
թեան գոյութեան համար զիստա-
ւոր պրինցիպներ էին համարում:

Ինչ աղաղակներ կարձակէին
մեր հակառակորդները մի բանի
տարի սրանից առաջ, եթէ մէկը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՐՈՆ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆ

Ինչպէս յայտնի է և գ ու լ ի տ ն երը աքսորվեցան
Ֆրանսիայից: Կարծես այդ քաղաքում եղութիւննե-
րից մինքն եկաւ այստեղ և այժմ կօնսէկվեն տ լի-
նէին...

Նորերում տպվեցաւ «Մեղու» Հայաստանի լը-
րագրում սի յօդուած Գ. Ե. ստորագրութեամբ,
կօթորից գրած, որ կատարելապէս չնչում է եղութի-
ւան ոգով:

«Մեղու» խմբագրութեան կարծիքով այդ յօ-
դուածը վերջնական վճիռ է տալիս այն պօլե-
միկային, որ իբր թէ ծագել է «Մշակ» և «Մե-
ղու» մէջ կրօնափոխութեան խնդրի առի-
թով:

Նախ պէտք է ասենք, որ մենք ոչինչ պօլեմիկ
չենք ունեցել և դիտաւորութիւն էլ չունենք բա-
նալ «Մեղու» հետ, ապաքիւն համարելով որ և
բանակաւ մի լրագրի հետ, որ աղին կերպով
բանակաւ չը գիտէ, այլ միշտ ստորութիւն ունի
կաղաքի ճշմարտութիւնը: Երկրորդ՝ մեր յարու-
ցած խնդիրը ազգային միութեան խնդիր էր և
ոչ թէ կրօնական միութեան: «Մշակ» մի խօսք
անգամ ասած չէ կրօնափոխութեան մասին:

Մենք ասեցինք, ազգը բաղկացած է այլ և այլ
դասակարգներից, այդ բոլոր դասակարգներնե-
րին պատկանող հայերը պէտք է միանան ազ-
գութեան մէջ: Կրօնը մի ազգի, մի ցեղի, մի
ազգութեան, որ ունի իր հայրենիքն ու մայրենի
լեզուն, չէ կարող ընդհանուր ազգային յատկա-
նի լինել: Կրօնը մարդու անհատական անբռնա-
բարեի համոզմունքի արդիւնք է: Մի ազգ կարող
է ազգութիւն կոչվել երբ ունի ընդհանուր

հայրենիք և ընդհանուր ազգային, մայրենի լեզու,
չը նայելով որ այդ ազգի այլ և այլ անդամները
այս կամ այն դասակարգին են պատկանում:

Եւ մանաւանդ թիւրքաց հայերի համար այս բո-
ւաբան անհրաժեշտ էր հասկանալ այդ ճշմարտու-
թիւնը, երբ թիւրքաց Հայաստանը որպէս մի ամ-
բողջ մարմին, պէտք է ստանայ բարենորոգումներ,
ձգտում է ստանալ ինքնավարութիւն:

Թիւրքաց Հայաստանին խոստացված վերանորո-
գութիւնը չէ վերաբերվում միմիայն հայոց ազգի
այն մասին, որ լուսաւորչական կրօն է դա-
ւանում, այլ առհասարակ հայերին է վե-
րաբերվում, ոչ թէ այս կամ այն երկրին, որ հայերով
է բնակեցրած, այսինքն թիւրքաց Հայաստա-
նին: Եթէ այդպէս է, ժամանակ է մոռանալ լու-
սաւորչական, կաթօլիկ, բողոքական, յունաւորան
ու մասնատական հայերի մէջ եղած խտրութիւնը
և նրանց փոխադարձ ատելութիւնը, ժամանակ է
վերջապէս որ լուսաւորչականները, այսինքն ազգի
մեծամասնութիւնը, դադարեն իրանց այսպիսի եղ-
բայրերին հալածելուց և ճանաչեն Հայաստանի
բոլոր հայերին, ինչ կրօնին և պատկանէին նրանք,
հաւատարմ քաղաքացիական իրաւունքը մասնակե-
լու իրանց զարդացական և ազգային հաստատու-
թիւնների մէջ:

Օրինակ, մինչև որ Կ. Պոլսի հայոց ազգային ժո-
ղովի մէջ կամ վանի, էրզրումի և ուրիշ գաւա-
ռական ազգային հայոց ժողովները մէջ կընտրվին
միմիայն լուսաւորչական հայերը, իսկ ուրիշ կրօն-
ներին պատկանող հայերը իրանց ներկայացուցիչ-
ները չեն ունենալ, — այդ բոլոր ժողովները երբեք
արժանի չեն լինի ազգային ժողովներ կոչվելու,
այլ կը լինեն միմիայն կրօնական կամ եկեղե-
ցական ժողովներ, ազգի մի ազգանդի ժողով-
ներ: Մինչև այն ժամանակ Եւրոպայի կատարելա-
յիւնները կունենայ նախկին հայերի վրա, որպէս մի
ազգանդի վրա, և ոչ թէ որպէս մի ամբողջ ազ-
գութեան վրա... Մի ազգ, որ ձգտում է մօտիկ

ապագայում ինքնուրոյն վարչական և անտեսական
կենտրոն ապրելու իր հայրենիքի մէջ, մի ազգ, որ
նայում է իր հայրենիքի վրա, որպէս մի ամբողջ
մարմին վրա, միթէ չը պէտք է նայի և ազգու-
թիւնը կազմող բոլոր մասերի վրա, որպէս ամ-
բողջութեան հետ մի ազգային մարմին
կազմող ամբողջ կազմակերպութեան վրա:

Գտնվեցան մարդիկ, որոնք մեզ պատասխանե-
ցին: Օճեր մտքերը արդար են, բայց դեռ ևս տա-
րածում են, թող ազգը առաջ ինքնավարութիւն
ստանայ, յետոյ քաղաքացիացի այդ մտքերը:

Բայց մենք կասենք, որ ոչ մի ազգ արժանի չէ
ինքնավարութիւն ստանալու, մինչև որ չը պատ-
րաստվի՝ այդ ինքնավարութեանը, մինչև որ չը
կրթվի կրօնական համբերողութեան և քաղաքա-
ցիական հաւատարմութեան ոգով մէջ, մինչև որ կա-
տարելապէս չի բացնի այդ քաղաքական դարափո-
շերը:

Բաղդաւորապէս Թիւրքիայի հայ մամուլը արձա-
գանք տուեց մեր մտքերին, — և այդ էր, ի հարկէ,
մեր գլխաւոր նպատակը Կ. Պոլսի հայոց մամուլը
սկսեց նայել հայոց խնդրի վրա ոչ թէ կրօնա-
կան տեսակէտից, այլ ընդհանուր ազգային տե-
սակէտից, դուրս բերեց թանաջանքի Հայաստանի
ազգայնականութեան, որոնցից երեւում է թէ հայ
Հայաստանում, մեծ ամասնութիւն է կազ-
մում: Մեր թղթակից Հայկական էլ մեզ գրում է
թէ՝ «Ժամանակ է նայել ազգի վրա ցեղական տե-
սակէտից և թէ մենք ջոկեցք այսպիսի հայերին
լուսաւորչական հայերից, Եւրոպայի շատ տխուր
գաղափար պէտք է կազմէ մեր քաղաքացիական
հանճարի վրա, այն բոլորին, երբ թիւրքաց Հա-
յաստանի բովանդակ ազգը պէտք է ճանաչվի Եւ-
րոպայից, որպէս ինքնավարութեան արժանի: Կ.
Պոլսի «Միասին» լրագիրը աւելի հեռու էլ գնաց,
նա Հայաստանի ազգայնականութեան վրա խօսելով
սկսեց գործածել ոչ թէ միայն հայ, այլ հայա սա-
տանցի անունը:

Մինչև որ մենք այդ մտքերը յայտնում էինք,

գտնվեցան խաւարաւորներ, որոնք պարագլուխը
պ. Պետրոս Սիմեոնեանն է, «Մեղու» խմբագիրը,
և որոնք իրանց յատուկ խաղախօսութեամբ, իսկոյն
օգուտ քաղելով մեր յարուցած խնդրից, ուրիշ
կերպարանք տուեցին այդ խնդրին, հաւատացնելով
ժողովրդին, թէ «Մշակ» քաղաքում է հայերին
կրօնափոխութիւն... և ինչ կրօնափոխութիւն՝ դէ-
պի բողոքականութիւնը: «Մշակ» նոյնքան
համակրութեամբ է խօսել և հայ-կաթօլիկների և
հայ-մասնատականների և հայ-բողոքականների մա-
սին: Ինչից եղբայրական «Մեղու» խմբագիրը թէ
մենք բողոքականութեանը աւելի ենք համակրում,
— չը գիտենք: Գրեցիք այդպէս էլ լինէր, ազգին
ինչ փայլ մեր անձնական համակրութիւնը, մեր
անձնական ճաշակը: Մենք ազգի վրա սովորու-
թիւն չունենք ազգի զգացմունքի միջոցով, այլ
մտքի միջոցով, մենք ազգի վրա չենք բարձրում մեր
անձնական ճաշակը, մենք նրան յայտնում ենք
անհրաժեշտ, ժամանակակից գիտութիւնից մշակված
ճշմարտութիւնը, թէ ազգը միշտ թող կը լինի,
ազգութիւն է ի կ ո չ վ ի, այլ միայն կրօնա-
կան աղանդ կը լինի, քանի որ ինքն իր ձեռքով
իրան կը զիջասի, իր թիւր արուեստական կերպով
կը պակասեցնի, կոյր մոլեռանդութիւնից զրգված
կը վիժի իրանից ազգայնական ամբողջութիւնը
կազմող այս կամ այն մասը, միայն այն պատճա-
ռով, որ այդ մասը ուրիշ կրօն է դաւանում, Աս-
տուծուն ուրիշ կերպ է աղօթում, քան թէ մեծա-
մասնութիւնը: Ամեն հայը պարտաւոր է հայ լի-
նէի և եթէ նա, ինչ կրօնին և պատկանելով, իրան
հայ չէ անուանում, նա ազգուրաց է, նա դաւա-
նան է իր ազգութեան: Իսկ ինչ կրօնի կը պատ-
կանի այդ հայը, — այդ մեզ փոյթ չէ, նրա հաւատը
ազատ է:

Մինչև որ ինքն Սիմեոնեանցը խաղախօսութեամբ
աշխատում էր ջլատել մեր ջանքերը, որոնցով մենք
կամենում էինք հաշտեցնել ազգի այլ և այլ երկ-
պառակեալ մասերը, աշխատում էր զրգուել ամ-
բողի մոլեռանդութիւնը և մեր գործունէութիւնը

Ուրբեմն (Մշակը) համ ազգասիրական կետից է նայում, համ էլ անզառաքաման ու կէ որ կուրորէն ուրի մարդու ազգացութեան տակ է ընկնում, այն էլ Ամիրխանեանց պէս մի չհասաւ բարդու գործիքէ դատնում... Սը գիտեմ, թող այդ մասին դատէ ընթերցողը, ու աւելի չհասաւ բէրէ։ Ամիրխանեանցը, որ իր սխալ թէ ուղիղ համոզմունք պատճառով և այդ համոզմունքի մէջ առկուէ կերպով մնալու պատճառով հայերի մէջ ապրելու զրկում է վերջին կտոր հացից, ստիպված լինելով զէսից զէնից հաւաքված թաղապետութիւններով և գերմանական դպրոցի մէջ դասատուութիւնս ապրել, Ամիրխանեանց, որ ինչքան էլ հիմնաւոր կերպով գիտեաք եօթ թէ ութ հին և նոյն լեզուներ, հմուտ լինել մանկավարժութեան, լայն բողոքական լինելով, հնար չունի ոչ մի հայոց դպրոցի մէջ մտնել, և եթէ հայերից իւր հացը ստանալու լինէր, պէտք է քաղածք մտնէր, Ամիրխանեանցի պէս մարդն է չափաքը, թէ Գ. Եւսի պէս համալսարանական մարգիկ, որոնք պատրաստ ամեն տեսակ չհասնում որը հինգ անգամ ծախել իրանց համոզմունքը, ամենախոր կերպով ուսուցողական լինելով ամեն մի բնամիտ համալսարան, միայն թէ այդ կամ այն բանի վրէն հանուր մտողն ամենակէ ճայն ստանալու բան խորհուրդի անգամ ընտրվելու համար, օտար անգիտեալի վրա նստեն ու չափեն... Այդ անհոմարդիկ, որոնց իւրաքանչիւր քաղը, խօսքը, գլոսը

Թէ միայն լրացականութիւնը, այլ և հիւպատակներն պաշտօնական հաղորդութիւններն: Այդ հիւպատակներն թուում են և անգլիականները:

Քիւրքերի կատարած կողոպուտները և հոգնութիւնները Հայաստանի մէջ, նոյնպէս և վատ վարչութիւնն այլ հետեւողները, իրաւացի կերպով նկատուած է «Times» լրագրի թղթակիցը, այնպէս ապացուցված են, որ իւրաքանչիւր պաշտօնական փորձը նրանց ծածկելու մասին առիթ է տալիս կատարել մտադիր չէ եւսանդոտ միջոցներ գործարարել նրանց առաջն առնելու համար:

Նախատեսելով, որ ամիսներ փաստերի լոյ մերժելը բաւական չէ, Բ. Պուռը Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւններ ղեմ մի ուրիշ նոյնքան ուղղակի առիթ բերեց հայեւրի բանակութեան մասին: Նա հաստատեց նաեւ է, որ երգրուած, Վանի, Բիթլիսի և Իրաքեթի վրայի տներում հայերը ամբողջ ազգաբնակչութեան 17% են կազմում: Մի կողմ թողնելով այն հարցը, թէ ի՞նչ յարաբերութիւն ունի այս ստատիստիկական լրագրայութիւնը Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի հետ, որով Բ. Պուռը պարտաւորուած է անպայման տալ Հայաստանին վերանորոգութիւններ, առանց ուշադրութիւն դարձնելու քրիստոնէայ ազգաբնակչութեան այս կամ այն քանակութեան վրա, թողնում ենք «Times» լրագրի անկողնապատ թղթակցին հերքել այս ստատիստիկութիւնը:

Մայրոք Տրոստերի կատարած հետախուզութիւնները երբեք մի և Իրաքեթի վրայի տներն մէջ, առում է նա, այն եզրակացութեան են հասցնում, որ հայերը թուով աւելի շատ են քան թէ թիւերը և քիւրքերը առանձին առանձին վերցրած, թէպէտ աւելի քիչ են, քան թէ այդ երկու ժողովուրդները միասին վերցրած: Դրանից մենք կարող ենք եզրակացնել, որ հայերը ամբողջ ազգաբնակչութեան 33% աւելի են և 50% պակաս: Վանի և Բիթլիսի մէջ հայերի թիւը, արժանահաւաստ աղբիւրների համեմատ, նոյնքան մեծ է, իսկ Սիւսի մէջ, որ հայոց վրայի տներն չէ համարում, մի գործին

ճանօթ տնձի վրայութեան համեմատ, որին ղեպի հայերը կամ քրիստոնէական կողմնապահ չէ կարելի համարել, հայերը ամբողջ ազգաբնակչութեան 25% են կազմում:

Իրական կողմից ընկելով Բ. Պուռն պատասխանը Հայաստանի մէջ մտցնելի վերանորոգութիւնների մասին, անկարելի է չը նկատել, որ թիւերը նախագիծը լին է անորոշութեամբ և նշանակալի հարցերով, որոնց օգնութեամբ Բ. Պուռը միշտ կը կարողանայ Հայաստանը առաջնայ պէս անիշխանութեան բնուէրը և բոլոր զինուորները ոչնչացնել: Սրանի, խնդրի գլխաւոր կողմի, Ֆինանսական վերանորոգութեան մասին Բ. Պուռը խոստանում է, որ անգլիական վարչութեան ծախսերը ամենից առաջ կը ծածկվին նախագի տուած ուղղակի հարկերից և որ այդ եկամուտի մնացորդի մի մասը կը պահպանվի վերանորոգութիւնը առանց ապահովութեան, առանց մասնացրոյ լինելու հարկերը որոշելու ձևերի և հասարակական հսկողութեան վրա նրանց հաւաքելու և ծախսելու ժամանակ, նման է այն վերանորոգութիւններից մէկին, որոնցով թիւերի մոլորեցնում էր թիւերը լրագրի տնտեսական ընթերցողներին:

Վերանորոգութիւնների նախագի միւս կէտերն էլ իրական կողմից սրա նման են: Քրէական գործերի համար երգրականի դատարան է խոստացվում, բայց ոչինչ չէ տալու՝ դատարանի կազմակերպութեան և դատարանախարութեան մասին: Նոյնպէս անորոշ է և ժողովրդների հաւաքելու և կազմակերպութեան կէտը:

Անկառիկ Բ. Պուռն հնարած վերանորոգութիւնների այս պակասութիւնները չեն ծածկվի Բերլինի դաշնագրի ստորագրող պետութիւններից: Պէտք է յուսաւ, որ պետութիւնների ներկայացուցիչները Վ. Պուռի մէջ չեն ցանկանայ թիւերի գործիք դառնալ և արժանաւոր կերպով կը գնահատեն Բ. Պուռն ձգտումը վերանորոգութիւնների հարցը ստիպելի կատակ դարձնել: Այսպէս

Թէ այնպէս Ռուսաստանի պատիւը և արժանաւորութիւնը պահանջում են, որ իր ամենաբարձր որդիներն արհեստի գնով ձեռք բերված դաշնագրի պայմանները խառնութեամբ և խելութեամբ կատարվեն: Նոյնը պահանջում են և ռուսաց շահերը Արեւելքի մէջ: Փորք-Ասիայի քրիստոնէայ տարրը առհասարակ և մանաւանդ հայերը այդ երկրների մէջ մեր միակ բնական դաշնակիցներ են, որոնց իրաւացի յոյսերը ներկայ դարձայ ընթացքում խաբված են և չեն իրագործված երբեք անգամ, երբ պատերազմներից յետոյ: Մեր ուղղակի շահերը պահանջում են, ապահովել հայերի վիճակը և վերջ գնել անիշխանական դրութեանը մեր արական սահմանի վրա:

ՄԻ ԲԱՆԻ ՆԱԽԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Թիւրքաց բազմաթիւ հարստահարութիւնները, ինչքան որ առաջ կատարվում էին, դուրս արդիւնք էին բարբարոսութեան, որոնց ղեմ կառավարութիւնը շատ անգամ արեւելք էր դնում, բայց այժմ նա ստացել է մի ուրիշ կերպարանք—այն է քաղաքական:

Օրիցօր հայի զրկողութիւնը, բնչից յաւիշտակութիւնը, սպանութիւնը, հրդեհը, սովը, ձեռնարկ և սոցա պէս բիւրաւոր արկածները բարդվում են և բազմապատկւում են, և դրանց բոլորի մէջ տեսնվում է թիւրքայի զաղտնի ձեռքը: Այդ համար կոխի մէջ նա իր ձեռքում երկու գործիք ունի, մինը՝ վայրենի և արեւաբարձ քրդերը, որոնց օգտաւտութեան մասին նախատեսեց Ալի փաշան, հեռացնելով նրանցից այն կոտորածը որ պէտք է գործ դրվէր նրանց վրա, սուլթան Մէջլիսի հրամանով—միւսը՝ Ֆանատիկոս մոլաները—դուրանի այդ մոլեռաւի սրբանակները:

Թիւրքային անորժեկ չէ հայի արթնանալը, նրա ապահովութիւնը, հանգստութիւնը, նա ուզում է հայից ապառով: Թէ ինչքան նրան ցանկալի է այդ բանի իրագործվելը, ցոյց կը տալ հետեւեալը:

Կառէ ալաղաւան հայը, երբ որ հայ լինելով, բայց դժբաղդութիւն ունելով ծնված լինել կաթօլիկ, բողոքական կամ մահմետական հայ ծնողներից, են չեն կարող ընտրված լինել, ինչքան էլ ցանկանաւ ծնողները ազգիւ, Վ. Պուռի ազգային ժողովի մէջ, իսկ դուք կարող էք, որովհետեւ լուսաւորչական էք: Դուք կարող էք վանի կամ էրզրումի հայոց զպրոցի մէջ դաստաւարութիւն անել, տեսուչ նշանակվել, իսկ ես չեմ կարող թէն գուցէ ձեռնադրել շատ և շատ գիտութիւն ունենալ:

Այդ միայն եզրիտներին է յատուկ խոստովել բուն հարցից: Չկը նախատեսվում են իր առեւտրի վրա, իսկ դուք ձեռք համազված և բուն քրիստոնէայ ձեռնադրելով, սիրոյ և համակրութեան վրա էք խոսում:

Վերջնապէս եմ նորհալալութիւնս յայտնելով պ. Գ. Ն.-ին, որ այդ քան բարի ու ներողամիտ է, որ ինձ մասնաւորապէս թող է տալիս, եթէ կատարել, կարող եմ կրօնափոխ լինել: Ծնորակալ եմ շատ ազդ չնորհի համար, ես այդ մասին պէտք էլ չունեմ, չը նայելով որ պ. Գ. Ն. պատրաստ է այդ ղեպքում խոսնարսիվել իմ իր զմտանալի մի ձեռքով:

Դա էլ մի լաւ եղովաւութիւն է, նախ ասել, որ ես մինչեւ այն աստիճան մահ ու եկ եմ, այն աստիճան անզորագրած մարդ եմ, որ կարող եմ միայն ուրիշի գործիք լինել, իսկ յետոյ ասել, որ ինչպիսիպէս է իմ խղճի առջեւ, որպէս մի շատ զարդացած մարդու արած քայլի առջեւ և պատիւ է անում ինձ համեմատել մարկիդ Ռիպոնի հետ:

Եղովաւները միշտ այսպէս են անում, մարդուց խօսքի բըրդ ուրիշ քաշելու համար, նախ վիրաւորելով, ստորագրելու են նրան, յետոյ յանկարծ շողորմութեամբ, բարձրացնում են...

Իսկ ես իմ կողմից կարող եմ հաստատու ասել, որ եթէ Գ. Ն. իր կրօնը փոխի, ես երբեք չեմ խոսարհի նրա իր զմտանալի մի ձեռքով առջեւ, որովհետեւ համոզված եմ որ եթէ Գ. Ն. այդ քայլն

Բոլոր կատարվող յայտնի չարիքներից իրաց, Խարբերի շրջապայքի հայերը, մի անգամ ընդ մնաց, որ պիտի զոհ գնային մոլաններից թիւադրված մի դաւադրութեան, եթէ այդպիսին որ ստաջ չը յայտնվէր: Մոլանները մտել էին զեանի տակ դադարի խորշում և այնտեղից մեծ մարգարէի անունով հրաւիրում էին զեաններին աշխարհի երեսից զլստվին ջնջել, առարկելով թէ Մուհամմար և Աստուած այդպէս են կամում: Այդ հրաւերը իսլամների մէջ գաւաւ պատշաճաւոր ընդունելութիւն, որովհետեւ նրանք զեանի տակից եկող ձայնը վերին զօրութեան էին վերաբերում, և մի առանձին գերբնական նշանակութիւն էին տալիս: Այդ ղեպքը տեղի տուեց «Մշակի» 99 համարում յիշած գաղթականութեան շարժվելուն:

Այսպէս երբ ամեն տարի Բոսֆորի ափերը թնդում են հայոց սահմանադրութեան տարեդարձներով, նոր բարեկերպ, Հայաստանի օգն էլ թնդում է սրտածմէլի սրտապանիւղով, մի տեղ քամում են շանկանեան, միւս տեղ արին:

Միւս կողմից նկատելի կէտն այն է, որ հայերի ներապայի պաշտպանութեան դիմելը զրգուում է թիւրքաց բարկութիւնը, պատճառ է տալիս նրանց բոլոր անբաւականութիւններին: Թիւրքիւն կրում է այն վատ անհասարկ նմանութիւնը, որ իր ուժեղ հակառակորդին չը կարողանալով ընդդիմադրել, նրա վրէժն առնելու համար, ծեծում է և արորում է իր անմեղ ընտանիքը:

Հայոց ինքնավարութեան խնդիրը աւելի խիստ բորբոքում է թիւրքի կատաղութիւնը: Բայց զարմանալին այն է, որ հայերին թշուառութեան անդունդը դրոբբու ամենախիստ հարուածը պատրաստվում է ազգուրացների ձեռքով, որոնց շարքը երկուսով ևս աւելաջուր... որքան սարսափելի ոճիր է ընդհանուր ազգի կեանքը զոհել իր փառապիրութեանը:

Տեսնեք, սրանից յետոյ ի՞նչ է սպասում հայերին:

Ե. Պ.

ԽՈՐԱԳԻՐ—ՀԻՄՆԱԿԱՐԿՈՂ ԳԻՒԴՈՐ ԱՐԴՈՐՈՒՆԻ

արաւ, անպատճառ մի շահախնդական նպատակ պէտք է ունենայ իր աչքի առջեւ:

Դարձեալ մի խօսք: Դա մի տեսակ խարդախութիւն, և զուգարմութիւն էլ արդեօք, որ չը նայելով թէ մենք անխորհր համակրութեամբ խօսում ենք բոլոր ալաղաւան հայերի մասին, ազգային տեսակէտից ոչ մինի մէջ խորութիւն չենք դնում՝ լինի նա կաթօլիկ, լուսաւորչական, բողոքական կամ մահմետական—պ. Գ. Ն. և «Մշակ»-ն ամբողջ ժամանակը չենտոււ են բոլոր ալաղաւան հայերին, որ մենք առանձին համակրութիւն ունենք ղեպի բողոքականները, դիտմամբ լուսնութեամբ անցնելով մահմետական, կաթօլիկ և յունաղաւան հայերին, որոնք բոլորն էլ բազմաթիւ են թիւրքաց Հայաստանում: Ինչպէս անուանում եթէ ոչ անաղաւանութիւն, խարդախութիւն, եղովաւութիւն՝ ազգային մի ուժեղ և անխորհր զարմնեղ ոչ թէ միայն կրօնաւան լինելով, բայց հաւատացնել մոլեռաւի ամբողջն ուր, մենք կրօնաւան փոխութիւն ենք քարոզում:

Բայց պ. պ. Սիմեոնեանց, Գ. Ն. և նրանց պէսները թող իմանան, որ անցան այն ժամանակները, երբ զրաւան խարդախութեամբ, զրաւան խարդութեամբ, կարելի լինէր ժողովրդականութիւն ստանալ հասարակութեան մէջ: Կան, ի հարկէ, դեռ ևս բազմաթիւ յիմարներ, բայց միամտանութիւնը արդէն բաւական զարդացել և արթնացել է: Ուրեմն վաղ թէ ուշ այդ տեսակ նմանութիւնները կը մերկացվին—այդ մասին թող ապահով լինեն պ. պ. Սիմեոնեանց, Գ. Ն. և ընկերութիւնը:

Յիշեցէք իմ խօսքերը պարոններ, կը պատահի զարձակ որ մենք միմեանց կրկին կը հանդիպենք, գուցէ այն ժամանակ մեր գործածած թշուառ այնքան թանձր չի լինի և մեր ձեռքում ունեցած գրիչներն էլ աւելի սուր կը լինեն:

